Հավելված N 1
Նոր Հաճնի համայնքի ավագանու
2024 թվականի փետրվարի 22-ի N 18-Ա որոշման

Կ Ա Ր Գ
ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճընի համայնքում (այսուհետ՝ համայնք) տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառման գործընթացը, հաշվառման գրանցամատյանների վարման կարգը, գրանցամատյանների ձևերը:

2. Տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառումն իրականացվում է տեղական տուրք և տեղական վճար վճարողների գրանցամատյաններում (այսուհետ՝ գրանցամատյան), որոնք վարվում են ըստ տեղական տուրքերի և վճարների առանձին տեսակների:

3. Գրանցամատյանները դասակարգվում են՝

1) տեղական տուրք վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 1),

2) տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց հաշվառման գրանցամատյաններ (Ձև 2),

3) տեղական տուրք վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 3),

4) տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հաշվառման գրանցամատյաններ (Ձև 4):

4. Գրանցամատյանները վարվում են Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմի (այսուհետ՝ աշխատակազմ) համապատասխան ոլորտի բաժնում՝ բաժնի պետի պատասխանատվությամբ:

5. Գրանցամատյանները վարվում են ըստ տարիների:

6. Տեղական տուրք և տեղական վճար վճարողների հաշվառումը կարող է իրականացվել փաստաթղթային կամ էլեկտրոնային ձևով:

7. Փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները կարվում և կնքվում են աշխատակազմի կնիքով:

8. Գրանցամատյաններում առնվազն պետք է ներառվեն հետևյալ տվյալները՝

1) գրանցամատյանի վարման տարեթիվը,

2) տուրքի և տեղական վճարի տեսակը,

3) գրանցամատյանը վարող աշխատակազմի համապատասխան բաժնի անվանումը,

4) գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անուն, ազգանունը (ստորագրությունը),

5) տուրք և տեղական վճար վճարողների գրանցման հերթական համարը,

6) համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տեղական տուրք և տեղական վճար (լրացվում է առկայության դեպքում),

7) տեղական տուրքի և տեղական վճարի չափը,

8) ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք և տեղական վճար,

9) տեղական տուրք և տեղական վճար վճարող ֆիզիկական անձանց դեպքում՝ գրանցամատյաններում (Ձև 1, Ձև 2) ներառվում են նաև՝

ա. ֆիզիկական անձի անունը, ազգանունը (տվյալ լինելու դեպքում՝ հայրանունը),

բ. հաշվառման հասցեն,

գ. անձը հաստատող փաստաթղթի տվյալները,

10) տեղական տուրք և տեղական վճար վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ գրանցամատյաններում (Ձև 3, Ձև 4) ներառվում են նաև՝

ա. իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, կազմակերպաիրավական տեսակը,

բ. գրանցման հասցեն,

գ. գործունեության հասցեն,

դ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը,

ե. հարկ վճարողի հաշվառման համարը.

9. Համապատասխան բաժնում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարված գրանցամատյանները ստորագրվում են բաժնի պետի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմի արխիվ:

10. Գրանցամատյաններ կարող են վարվել նաև այն համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ), որտեղ գանձվում է տեղական տուրք և տեղական վճար.

11. ՀՈԱԿ-ներում տվյալ տարվա համար փաստաթղթային ձևով վարվող գրանցամատյանները ստորագրվում են տնօրենի կողմից և մինչև հաջորդ տարվա մարտի 1-ը հանձնվում են աշխատակազմին:

12. Գրանցամատյանների Ձև 1-ը, Ձև 2-ը, Ձև 3-ը և Ձև 4-ը կցվում են:

Ձև 1

Հավելված N 2
Նոր Հաճնի համայնքի ավագանու
2024 թվականի մարտի 22-ի N 78-Ա որոշման

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ
ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

«_____» _____ 20___թ

1. Տեղական տուրքի տեսակը՝ _____

2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համատասխան բաժնի անվանումը՝ _____

3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը)՝ _____

_____

N	Տեղական տուրք վճարողների			Տեղական տուրք վճարողի հաշվառման հասցեն	Տեղական տուրք վճարողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները	Համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տեղական տուրք	Տեղական տուրքի չափը	Ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք
	Ազգանունը	Անունը	Հայրանունը					
1	2			3	4	5	6	7
1								
2								
3								
4								
5								
6								
7								
8								
9								
10								
11								
12								
13								
14								
15								
16								

Ձև 2

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՆՈՐ ՀԱՇԸՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ

« _____» _____ 20___թ

1. Տեղական վճարի տեսակը՝ _____

2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համատասխան բաժնի անվանումը՝ _____

3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը)՝ _____

_____

N	Տեղական վճար վճարողների			Տեղական վճար վճարողի հաշվառման հասցեն	Տեղական վճար վճարողի անձը հաստատող փաստաթղթի տվյալները	Համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տեղական վճար	Տեղական վճարի չափը	Ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական վճար
	Ազգանունը	Անունը	Հայրանունը					
1	2			3	4	5	6	7
1								
2								
3								
4								
5								
6								
7								
8								
9								
10								
11								
12								
13								
14								
15								
16								

Ձև 3

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔ ՎՃԱՐՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ

« _____» _____ 20___թ

1. Տեղական տուրքի տեսակը՝ _____

2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համատասխան բաժնի անվանումը՝ _____

3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը)՝ _____

_____

N	Տեղական տուրք վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի		Գրանցման հասցեն	Գործունեության հասցեն	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տեղական տուրք	Տեղական տուրքի չափը	Ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական տուրք
	Անվանումը	Կազմակերպական իրավական տեսակը							
1	2		3	4	5	6	7	8	9
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									
11									
12									
13									
14									
15									
16									

Ձև 4

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ

« _____» _____ 20___թ

1. Տեղական վճարի տեսակը՝ _____

2. Գրանցամատյանը վարող աշխատակազմի համատասխան բաժնի անվանումը՝ _____

3. Գրանցամատյանի վարման համար պատասխանատու անձի անունը, ազգանունը (ստորագրությունը)՝ _____

N	Տեղական վճարի վճարող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի		Գրանցման հասցեն	Գործունեության հասցեն	Իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրանցման համարը	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Համայնքի ղեկավարի որոշման համարը և տարեթիվը, որի հիման վրա գանձվել է տեղական վճարի	Տեղական վճարի չափը	Ժամանակահատվածը, որի համար վճարվել է տեղական վճար
	Անվանումը	Կազմակերպաիրավական տեսակը							
1	2		3	4	5	6	7	8	9
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									
11									
12									
13									
14									
15									
16									